

« մաս առտուածոյն . 'ի փասս Տնասն իմոյ  
« խնամակալի :

« Սամաս մեծոյ Աստուած , օրհնեալ 'ի խո-  
« նարնեղ զբովանդակ իսկ մասունս Մեննեխ  
« Արեղական զարմանասրանչ ձեռակերտիս :  
« Սեամբս այստրիկ և րարստորք , գառիքք և  
« սխեք հրաշակերտք անմանացոսցնև զանուն  
« իմ » :

Ս. Գրոց Նաբուգոդոնոսորի փոփոխու-  
թեան վրայ պատմածը , նշանակուած է բա-  
բելական այն վիպաց մէջ զորս կ'աւանդեն  
մեզ Աբիդենոս և Բերոսոս : Կ'ըսեն որ Նա-  
բուգոդոնոսոր իր պալատան պատշգամբի  
մը վրայ ելլալով իմացուց իր ժողովրդեան  
որ Արևելքէն պարսիկ Ղորի (Կիրոս) մը  
պիտի գար և պիտի կործանէր Բաբելոնի  
ինքնակալութիւնը : Այս ձախորդ գուշակու-  
թենէն վերջը մարդկանց աչքէն աներևոյթ  
եղաւ :

Բաղդասարի ժամանակ եղած Բաղդէա-  
ստանի աղետալի վախճանին վրայ , Բա-  
բելոնի արձանադիրք բան չեն ըսեր , ինչ-  
պէս նաև Ստրեբտանի արձանագրութիւնք  
Վինուէի կրկին կործանման վրայ :

Բաղդասարէն ետքը Տիգրիսի ու Եփրա-  
դայ դաշտերն անցան արիական ցեղերու ,  
Պարսից , Յունաց , Աելեկիացոց , Հռով-  
մայեցոց , Պարթևաց և Սասանեանց : Եւ  
սեմական ցեղին չգարձաւ մինչև Արարա-  
ցոց գալուստը : Բայց դարձեալ արիական  
ցեղերն՝ են Գաղղիացիք և Անդրիացիք , որ  
պայծառացուցին Սենեքերիմի և Նարուգո-  
դոնոսորի տաճարները և Ասուր-Նասիր-  
Հաբալից ու Սարկոններուն յաղթական  
արձանագրութիւնները :

Պ. Մէնանի պիտի օգնեն այս բաները  
աւելի ծանօթ ընելու : Յուսանք որ Թագ-  
ղաբաղասարի և իրեն նմանեաց արձա-  
նագրութեանց վերջը դրուած օրհնութիւն-  
քը աղէկ արդիւնք պիտի ունենան .

« Առ նա՛ որ պարագայց ամօք զկեի իմ ե-  
« կնոցէ , ասացի զայս : Որ սրբէ զտախտակն  
« իմ , և յարդարեւ և ղեկ 'ի տեղիս իջեանց ,  
« և զանուն իջր սա իմոյս ղիցէ :

« Անո և աստուածքն մեծամեծք , տացնե  
« նմա զուրախտրիսն սրտի և յաշտոցսցնե նմա  
« 'ի գործս » :

### Հ Ռ Ո Մ Է Ա Կ Ա Ն Հ Ի Ն Օ Ր Ա Գ Ի Ր Ք

Վիկտոր-Քլէրը 1838 թուականին  
Բարիդու մէջ մէկ յօդուած մը հրատա-  
րակեց Հռովմական Օրագիրք մակա-  
նուամբ և վայելուչ ու խորին քննու-  
թեամբ կը խօսի ոչ միայն Հուովմայի ա-  
մէն տեսակ քաղաքական խնդրոց վրայ ,  
այլ նաև Օրագրաց ձեւին , նիւթին ,  
պարագայից և կարևորութեան վրայ :  
Օրագրաց սկիզբը ինքը հաւանական  
կը համարի որ Նուամանիոյ իյնալէն ե-  
րեք տարի վերջը սկսած ըլլայ , երբոր  
քրմապետաց տարեգրութիւնը դադրե-  
ցաւ : Կարծիք մը որուն կ'ընդդիմա-  
նան շատերը , յեցեալ Սուեանիոսի  
մէկ վկայութեանը վրայ , որ ուրիշ  
կերպ հասկըցուած է . և կը դնեն կե-  
սարու առաջին հիւպատոսութեան ժա-

մանակ , Օրագրաց առաջին հրատա-  
րակումը :

Առաջ երթալով դեռ աւելի նոր ա-  
տեններս այս խնդրոյս վրայ դրողներ  
եղան 'ի Գերմանիա , և բաց յալլոց յօ-  
դուած մ'եղաւ Ռէնսէնի անուամբ , յո-  
րում կը հրատարակուին ժողովրդեան  
օրական գործերը , ծերակուտի վճիռ-  
ները , ղինուորական և քաղաքական  
դէպքերը . և կը հետագօտէ անոնց ձեւը ,  
նիւթը և արժէքը , երբեմն աղէկ քննա-  
դատութեամբ , և իրրեմն ալ անհիմն  
կարծիքներով հնոց կարծեաց դէմ հա-  
կառակելով :

Քլէրը համարեցաւ , և շատերն ալ ի-  
րեն հետեւեցան այս կարծեացս , թէ  
կեսար հրատարակած ըլլայ ծերակու-

տի գործերը, որպէս զի վերջընէ պատ-  
րիկներուն ստացած այն խորհրդական  
մեծութիւնը, և ժողովրդեան առջև ի-  
րենց հեղինակութիւնը նուազեցընէ :  
Թերևս հեռի չէ ճշմարտութենէ, և շատ  
յարմար է կեսարու քաղաքական տե-  
սութեանց և դիտմանցը, որուն նպա-  
տակն էր եղծանել հին օրէնքները և  
ամենայն ինչ իր ձեռքն առնուլ : Բայց  
այլք կը ժխտեն այս մեկնութիւնը ու-  
րիշ կարծիքով, և կը հաստատեն թէ  
կեսար ձերականութիւն գործքերը հրա-  
տարակեր է պարզ դպրութեան և մա-  
տենագրութեան համար :

Գալով Օրագրաց նիւթին վրայ, հին  
և նոր քննութիւններէն յայտնի կ'ըլլայ  
թէ Հռոմայի մէջ հասարակապետու-  
թեան վերջին ժամանակները և ամ-  
բողջ տէրութեան մէջ եղած օրագիր-  
ները մասամբ այժմեան օրագրաց նմա-  
նութիւն մը ունէին, ինչպէս զանա-  
զան անուամբ ալ կը կոչուէին . Օրա-  
գիր Հռոմեական ժողովրդեան, ֆա-  
ղաքական օրագիր, և այլն : Ասոնցմէ  
պատասխիկ մ'ալ չէ մնացած, որ իրենց  
ճիշտ ձևը մեզի աւանդէր . վասն զի այն  
մնացած կտորները որ կ'իջան Հռոմայ  
585 թուին, յայտնի է որ վեշտասանե-  
րորդ դարու հմուտ խաբեբայի մը գը-  
րուած են : Բայց շատ դէպքեր կը յիշուին  
որ մատենագիրք այս օրագիրներէն  
քաղած ըլլան . որով գիւրիին է իմանալ  
թէ ինչպիսի նիւթերու վրայ կը գրէին .  
և թէ ինչ բաներ ժողովրդեան կը պատ-  
մէին, և թէ որչափ հաւատք կրնայ  
ընծայուիլ անոնց իբրև պատմական յի-  
շատակարաններու :

Երբ Հռոմեական պետութիւնն եր-  
թարով տարածուեցաւ, քաղաքացիք  
ալ ստիպուեցան հասարակութեան և  
առանձին գործոց պատճառաւ հեռա-  
ւոր տեղեր բնակելու . ուստի այն ա-  
մեն բան՝ ինչ որ Հռոմի մէջ կը պա-  
տահէր՝ նամակաւ կը հաղորդէին իրա-  
րու . կիկերոնի առ այլս և այլոց առ  
ինքն ուղղուած նամակներն կը ծա-  
նուցանեն ինչ որ հանապագօրեայ օ-  
րագրաց մէջ կը բովանդակուին, որ է

բնել ժողովքները, և հասարակաց իշ-  
խանութեան հրատարակուած հրա-  
մանագիրները, Հռոմեական ժողովր-  
դեան ընտրութեանց մէջ բռնած խար-  
դախ ճամբայները, դատաստանները,  
թատրոնի մէջ փաստաբաններու յան-  
ցաւորաց դէմ սուլելները, Երևելի և  
Նշանաւոր գործերն աւելի մանրամասն  
կը ստորագրէին . Միլոնի վրայ Ասկո-  
նիոս Պեգիանոս՝ օրագրաց մէջ շատ բա-  
ներ գտաւ, որոնցմով կըցաւ մեկնել և  
պարզել կիկերոնի գրքերը . և պատմել  
կողոպտի արիբունական յուզմունքնե-  
րը, և որուն մէկ ազատագրեալը կըցաւ  
զՊոմպէոս իր տանը մէջ պաշարել . և  
անկէ քաղեց ուրիշ առանձին դէպքեր .  
կըղոպոսի սպանութեան ճիշդ օրը, ժողո-  
վրդեան ապստամբութիւնը և Սալուս-  
տեայ և Կ . Պոմպէոսի ատենի մէջ ըրած  
խօսակցութիւնները, որոնք Միլոնի  
թշնամիներն էին :

Սովորական մանր մունր ծանօթու-  
թիւններ ալ կային այս օրագրաց մէջ .  
ինչպէս երևելի անձանց մահուան յի-  
շատակն, յուղարկաւորութիւններ, ժո-  
ղովրդեան թշուառութիւններ, խեղ-  
կատակութիւններ, հարսանեաց ար-  
ձանագիրք, սուսերամարտկաց նկա-  
րագիրներ, և ուրիշ որ և իցէ տե-  
սակ հանդիպած դէպքերու մանր  
ծանօթութիւններ . և ինչ որ Հռոմ  
քաղքին մէջ կը պատահէր, պատե-  
րազմական լուրեր և քաղաքական  
տեսութիւններ : Կը տեսնուէր անոնց  
մէջ թէ Պոմպէոսի հանճար կը պակսէր  
և կիկերոնի առաքինութիւն . կը խօ-  
սուէր նաև թէ Խապիտ ոտքի տակ ին-  
կած է Գաղղիոյ յաղթականէն . նոյն  
ժամանակին մոլութեանց և ապակա-  
նութեանց դէմ զրոյցներ . կրօնական  
հանդէսներու և մեծամեծ դիպուածոց  
վրայ տեղեկութիւններ : Պիլինիոս օրա-  
գրաց մէջ գտաւ որ կըղոպոսի սպանման  
տարին աղիւս անձրևեր է երկինք :

Աւելի շատ յիշատակութիւններ կան  
կայսերաց ժամանակի օրագրաց մէջ .  
որոց մէջ կը տեսնուին յօգուածներնոյն  
ժամանակի բարուց վրայ : Շատախօս .

ներու և միմոսներու խումբեր կը շատ-  
նան հասարակ ժողովուրդը զուարճացը-  
ներու համար . և ասկէ կը տեսնուի որ  
բռնակալութիւնն զհասարակութիւնը  
իր շահուն համար կը զեղծանէր : Կեսար  
որ շատ աղէկ զիտէր ազատութեան  
գործիքները ընդդէմ ազատութեան  
գործածել, գիտցաւ օրագիրներն ալ  
յօգուտ իւր շրջել, անտարբեր ամե-  
նեին 'ի ճշմարտութեան և 'ի ստախօ-  
սութեան . և գրել տուաւ որ Մ . Ան-  
տոնիոս հաւանութեամբ ժողովրդեան  
ուզեց իրեն թագաւորական պաշտօն  
տալ, բայց ինքը յանձն չառաւ : Օգոս-  
տոս հաշտեցուց ազատութեան հետ  
թէ զճարտարխօսութիւն և թէ զպատ-  
մութիւն, և թող տուաւ միայն որ իրեն  
վրայ գրուի . մինչդեռ կ'արգելուր ծե-  
րակուտի գործոց հրատարակումն, աչք  
զօցեց օրագիրներուն, բայց զանոնք  
սաստիկ քննութեան տակ զրաւ . և  
այս տևեց մինչև Տիբերիոսի և այլոց  
բռնաւորաց ժամանակ :

Երբոր ամենայն ինչ մէկ մարդու մը  
ձեռքն է, օրագիրները կը խօսին թա-  
գաւորներու և պալատականաց վրայ :  
Լիւիա կը հրատարակէ այն ծերակոյտ-  
ներու և քաղաքացեաց անունները, ո-  
րոնք խնդրեր էին զինքն ողորունելու, զոր  
վերջը նոյնպէս ըրաւ Ագրիպպինա : Տի-  
բերիոս խորամանկ 'ի բռնաւորս, վատ  
և ամբթալի կերպով գործածեց օրա-  
գիրները . իր անձին դէմ հատուածներ  
դնել կու տար, և կը հրատարակէր ոչ  
միայն այն բաները՝ որոնք զաղանի իր  
անձին դէմ զուրջուած էին, այլ նաև իր  
կողմանէն ալ աւելցնելով շատ մեր բաներ  
որպէս զի պատրուակ առնէ յետոյ ա-  
նոնց վրէժխնդրութեան : Դոմետիանոս  
արգիլեց օրագրաց մէջ գրելու այն բա-  
ները՝ ինչ որ իրեն անհաճոյ էին : Ամենէն  
վատ կոմոզոսն եղաւ, որուն սիրելի էր  
ամեն տեսակ գայթակղութիւն ու ան-  
կարգութիւն . ուզեց որ օրագիրներու  
մէջ հրատարակուին բոլոր իր անգթու-  
թիւններն, սուսերամարտկաց ըմբշա-  
մարտութեան փորձերն . և միով բանիւ  
իրեն բոլոր անասնձ կենաց նկարագիրը :

Կը հրատարակուէին յիշատակարան-  
ներ, օրէնսգրութիւններ, հրովարտակ-  
ներ, իշխանաց շինուածապետական գոր-  
ծեր և իրենց խօսած ճառերը, բարձ-  
րագոյ ծափահարութեանց պաղաղաներ  
առ ծերակոյտն, տարբ քսան անգամ  
կրկնուած, որոնք Հուովական պատ-  
մութեան ամբթալի էջերն կը բռնեն .  
Ներոնի տաճարներ շինելու առաջար-  
կութիւնները, կողդիոսի աստուածա-  
ցուցումը, Դոմետիանոսի աստուածա-  
կան անուն տալը . և ասոնք կ'ըլլային  
այն ազատ քուէարկութեամբ, ուր եր-  
բեմն նոյն տեղը հասարակապետու-  
թեան ժամանակ ծերակոյտներ կ'ըն-  
տրուէին . ըստ վկայութեան Տակիտոսի՝  
ծերակուտին վճիռներն անգամ անոնց  
մէջ կը գրուէին ու զաւառնեցրու մէջ կը  
հրատարակուէին : Թրաստէայի վրայ դը-  
րուածները կը կարդային իրեն փառքը  
ճանչնալու համար . մինչդեռ բոլոր ծե-  
րակոյտն կը շողորթեթէին ու կը դաժէին  
Ներոնի անգութ իրմարութիւնները :

Ընդարձակ տեղ կը գրուէին նաև  
զուարճալիքներն, հրաշալիք, առաս-  
պելներն և յիշատակութեան արժանի  
գործեր : 800 թուին, կողդիոսի ժա-  
մանակ՝ օրագիրներն ծանուցին որ փիւ-  
նիկ հաւը Հուովմ տարուեցաւ : Պլինիոս  
կարդացեր էր հոն որ 748 թուին ա-  
պրիլի 12ին Օգոստոսի բղեջխութեան  
երկրտասաներորդ տարին Յիէզովէէն  
Քրիստիինոս իշարոյ մէկը ընտանեօքն  
եկաւ զոհելու կապիտոլիոնի փառաւոր  
տաճարին մէջ, հանդերձ իրեն 7 որ-  
դիքներով և 2 աղվկամբ, 25 մանչ  
թոռներով, 8 աղջիկ թոռներով և 29  
թոռան թոռներով :

Ասոնց մէջ կարդաց նաև կարմիր կո-  
չուած հերձուածոյն գլխաւորին պատ-  
մութիւնը՝ որ խարուկաւ մեռաւ . և  
մասնաւոր դիպուածն որ հանդիպեցաւ  
Դիտիոսի Սաբինոսի գլխապարտու-  
թեան ատեն, թէ ինչպէս դատապա-  
տուեցաւ 'ի մահ իր ծառաներով, ո-  
րոնցմէ մէկուն չունն ընկերեց անոր  
մինչև բանտ և ինչուան դահալովծելու  
տեղը՝ 'ի Տիբերիս գետ, ուր ամենայն

Նանք 'ի գործ դրաւ որպէս զի տիրոջ մարմինը ջրին երեսը պահէ :

Սուետոնիոս որ մանր պատմութիւններով շատ կը գուարճանար , ամենայն փութով քննեց օրագիրները , և անոնց մէջ գտաւ Տիբերիոսի և կայիզարյի ծննդեան օրերը . նոյնպէս յառաջ կը բերէ երեք նշանագիրներն , զոր կը գոչիտ լատին գրերու մէջ անցուց . և յետոյ բոլորն ալ իրեն հետ ջնջուեցան : Օրագրաց մէջ կը գտնուի մասնաւորապէս ներքնի շինած ամփիթէատրոնն արեսեան գաշտին մէջ . նոյնպէս գտաւ անոնց մէջ Գերմանիկոսի յուզարկաւորութեան վրայ յիշատակութիւններ և ներկայ եղելոց անունները : Յօրնազ ալ կը ցուցնէ որ ծնելոց և պսակելոց թիւերն անգամ կը նշանակուէին անոնց մէջ :

Օրագիրներն շարունակուեցան մինչև կայսրութեան վերջերը , և թէ ոգոսեան օրինագրաց մէջ օրագրողին անունն անգամ կը նշանակուի diurnalius բառով . բայց անոնց կերպին ու հրատարակուելուն վրայ շատ քիչ ծանօթութիւն կայ , հանգերձ Ռէնսէնի բաղմախոյզ և բազմահմուտ քննութեամբ :

Օրագրաց հոգը գանձապետաց ձեռքն էր . և առանց իշխանաց հաւանութեան օրագիր չէր հրատարակուեր . ասանկ կը պահանջէր կայսերական իշխանութիւնն : Թուղթերու վրայ կը գրէին , և Հռոմ մարզիկներ կային որ ասոնցմով իրենց կենաց պարէնը կը գտնային : Քանի մը օր հրապարակի մէջ կը դնէին . և իւրաքանչիւր որ կըրնար ազատ կարգալ և օրինակել զանոնք : Յետոյ կ'երևնայ թէ զանոնք հրատարակաց գանձատան և զբատանց մէջ կը պահէին :

Անոնց արտաքին ձևոյն ու գրութեանց վրայ մասնաւոր յիշատակութիւն մը չկայ : Միայն կուինտիլիանոս կը գանգատի որ օրագիրները լեզուին խանգարման պատճառ եղած ըլլան : Ասոնցմէ ժանօթութիւններ քաղեցին Տակիտոս , Սուետոնիոս , Պլինիոս և յաջորդ մատենագիրները՝ Հռոմէական պատմութեան նկատմամբ : Որչափ ալ խանգարեալ և չարաչար 'ի կիրարկեալ ըլլան 'ի բանակալութեան' սակայն ասոնք կայսերական պատմութեան զլխաւոր աղբիւրներէն մէկը կը համարուին :

ԵՒԱՅԻ ԾԻՐԻՄՆ ՃԵՏՏԱՅԻ ՄՕՏ

Ճիտտա կամ ճիտտէ է քաղաք Արարիոյ Հէճազ գաւառին մէջ . թերակըզղոյն հիւսիսային արևմտեան կողմը կ'իյնայ՝ Մէքքէէն ինն հազարամեղր հեռու , և կը համարուի սրբազան սեպուած քաղաքին մէկ նաւահանգիստը : Ճիտտէն ալ Տաճկաց համար սուրբ քաղաքներէն մէկն է : Խահուէի , բամբակեայ հիւսուածոց , Եթովպիոյ խնկեղինաց և Հնդկաստանի կերպասուց շահապաճառի տեղի մ'է : 1858ին գնդակակոծեցաւ Անգղիացւոցմէ , վասն զի մահմետականները Անգղիացւոց և Գաղղիացւոց հիւպատոսները սպաններ

էին : 1811 տարւոյն՝ Մէհէմետ-Ալի տիրեց Հէճազի , և նոյն ճամբով նաև ճիտտէ քաղաքին ալ տիրապետեց :

Ճիտտէի յիշատակարաններէն երևելի կը համարուի Օմէնէ Հալվա կամ շիրիմն Եւայի կոչուածն : Գրեթէ քսան վայրկեան քաղքէն հեռու հիւսիսային կողմը կը տեսնուի ասիկայ ցանկապատի նման որմով բարձրացած , առ 'ի կողաց գմբէթ մը ունենալով . Մահմետականք կը կարծեն որ մարդկային ազգի նախամօրը գերեզմանն հոն ըլլայ :